ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 1880-25
21 օգոստոս 2025 թ.

,,ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ,, ԴԱՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՍԱՄՈՒԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ու Ց Ում

Հարգելի՛ գործընկեր

Դիլիջանի համայնքապետարանի, Դիլիջան համայնքին պատկանող անշարժ գույքի (հողամասերի) գնահատման ծառայությունների մատուցման ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԾՁԲ-25/09 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 22-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն, «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի և Դիլիջանի համայնքապետարանի ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԾՁԲ-25/09 ծածկագրով գնանշման հարցման հրավերի 9.5 և 10.1 կետերի պահանջների համաձայն, ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումները, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները:

Հաշվի առնելով այն փաստը, որ Ձեր կազմակերպության կողմից, սահմանված ժամկետում չի ներկայացվել պայմանագրի և որակավորման ապահովումները, «ԳԼՈԲԱԼ ՍՈՒՐՎԵՅ» ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ ՍՊԸ-ն զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից, և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետի համաձայն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ.՝ ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի
ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի
պետի պաշտոնակատար
Վարդան Գրիգորյան
աշխ հեռ. +37460700134 բջջ. +37494774911